ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2024 թվականի N 1401-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1260-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Դրամարկղային գործառնությունների իրականացման, դրանց փաստաթղթավորման, դրամարկղային գրքի գրանցման և դրամարկղային գրքի վարման կարգը, ինչպես նաև առհաշիվ տրված կանխիկ դրամով գումարների նկատմամբ ժամկետային սահմանափակումները սահմանելու մասին» N 1260-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 23-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 23.1-ին կետով՝

«23.1. Նույն արժույթի մասով կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է վարել մեկից ավելի էլեկտրոնային դրամարկղային գիրք:».

2) 25-րդ կետում «օրենքին» բառը փոխարինել «սույն կարգին» բառերով.

3) 27-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետը «ազգանունը.» բառից հետո լրացնել «, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով՝

«3) դրամարկղային գրքի արժույթը։».

4) 28-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-ին կետով՝

«28.1. Էլեկտրոնային դրամարկղային գիրքը համարվում է գրանցված (վերագրանցված) էլեկտրոնային դրամարկղային գրքի գրանցման (վերագրանցման) հայտը ՀՀ ՊԵԿ ներկայացնելու օրվանից։».

5) 31-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 31.1-ին և 31.2-րդ կետերով՝

«31.1. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղ կանխիկ դրամի մուտքագրման (ընդունման) դեպքում մուտքի օրդերը կազմվում է կանխիկ դրամը դրամարկղ մուտքագրելու (ընդունելու) պահին։

31.2. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դրամարկղից կանխիկ դրամի ելքագրման (վճարման) դեպքում ելքի օրդերը կազմվում է կանխիկ դրամը դրամարկղից ելքագրելու պահին, բացառությամբ տեղեկագրով կատարված վճարումների, որոնց դեպքում ելքի օրդերը կազմվում է սույն կարգի 9-րդ կետում նշված ժամկետներին համապատասխան։».

6) 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«32. Էլեկտրոնային դրամարկղային գրքի վարման համար պատասխանատու անձը (օգտվողը) կանխիկ դրամի բոլոր մուտքագրումների և ելքագրումների համար կազմված մուտքի և (կամ) ելքի օրդերների հիման վրա, ըստ դրանց կազմման հաջորդականության, բացառությամբ սույն կետում նշված դեպքի, էլեկտրոնային գրքում կատարում է գրանցումներ՝ պարտադիր լրացնելով մուտքի և ելքի օրդերի համարը, կազմման ամսաթիվն ու գումարը։ Մուտքի և (կամ) ելքի օրդերների վերաբերյալ տվյալները էլեկտրոնային դրամարկղային գրքում գրանցվում են ոչ ուշ, քան մուտքի և (կամ) ելքի օրդերների կազմման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում։ Գրանցումը կատարվում է գրանցման գործողության կատարման

ամսաթվով։ Էլեկտրոնային դրամարկղային գրքում մուտքի և (կամ) ելքի օրդերի գրանցումից հետո՝ գրանցված համար կրկնող նոր մուտքի և (կամ) ելքի օրդեր գրանցելու համար տող ավելացվելու դեպքում՝ նոր գրանցվող մուտքի և (կամ) ելքի օրդերի համարակալումը կատարվում է գրանցված համարի և «*1*»-ի համապատասխան համարի նշումով։».

7) 33-րդ կետում՝

ա. 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Էլեկտրոնային դրամարկղային գրքում կանխիկ դրամի մուտքագրումների և ելքագրումների գրանցումները վերջնական ամփոփվում են յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ, այդ օրվան անմիջապես հաջորդող ամսվա որևէ օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան էլեկտրոնային դրամարկղային գրքում հաջորդող ամսվան վերաբերող մուտքի և (կամ) ելքի օրդերների տվյալների գրանցումը։ Էլեկտրոնային դրամարկղային գրքում հաջորդող ամսվան վերաբերող մուտքի և (կամ) ելքի օրդերների տվյալներ չեն կարող գրանցվել, քանի դեռ դրան նախորդող ամիսը վերջնական չի ամփոփվել։ Հարկ վճարողի կողմից յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան անմիջապես հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ էլեկտրոնային դրամարկղային գրքում կանխիկ դրամի մուտքագրումների և ելքագրումների գրանցումների վերաբերյալ վերջնական ամփոփում չկատարվելու դեպքում յուրաքանչյուր ամսվա վերջնական ամփոփումը կատարվում է համակարգի կողմից ինքնաշխատ՝ այդ ամսվան անմիջապես հաջորդող ամսվա վերջին օրը։»,

բ. «գրանցումներն ամփոփելիս» բառերը փոխարինել «գրանցումները վերջնական ամփոփելիս» բառերով.

8) 34-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 34.1-ին, 34.2-րդ և 34.3-րդ կետերով՝

«34.1. Էլեկտրոնային դրամարկղային գրքի գրանցման (վերագրանցման) օրվա դրությամբ սկզբնական մնացորդի սխալ գրանցում հայտնաբերելու դեպքում՝ էլեկտրոնային դրամարկղային գրքի վարման համար պատասխանատու անձը (օգտվողը) սխալ գրառում պարունակող տողի խմբագրումն իրականացնում է սույն կարգի 34-րդ կետում նշված կարգով։

34.2. Էլեկտրոնային դրամարկղային գրքում կատարված գրանցումներում յուրաքանչյուր ամսվա վերջնական ամփոփումից հետո սխալ գրանցում հայտնաբերելու դեպքում էլեկտրոնային դրամարկղային գրքի վարման համար պատասխանատու անձը (օգտվողը) սխալ գրառում պարունակող տողի խմբագրումն իրականացնում է սույն կարգի 34-րդ կետում նշված կարգով, իսկ չգրանցված մուտքի և (կամ) ելքի օրդեր հայտնաբերելու դեպքում էլեկտրոնային դրամարկղային գրքի վարման համար պատասխանատու անձը (օգտվողը) տվյալ մուտքի և (կամ) ելքի օրդերը էլեկտրոնային դրամարկղային գրքում գրանցում է այն ամսվա մեջ, որին վերաբերում է տվյալ մուտքի և (կամ) ելքի օրդերը։

34.3. Սույն կարգի 34.1-ին և 34.2-րդ կետերով սահմանված դեպքերում կատարվում է տվյալ և հետագա ամիսների հաշվարկների վերահաշվարկ։».

9) 35-րդ կետում՝

ա. 3-րդ ենթակետում «օրդերների համարն» բառերը փոխարինել «օրդերի համարը, կազմման ամսաթիվն» բառերով, իսկ «գրանցելը» բառից հետո լրացնել «կամ սույն կարգով սահմանված ժամկետից ուշ գրանցելը.» բառերով,

բ. 4-րդ ենթակետում «դրամարկղային մուտքի և ելքի օրդերների համարն ու գումարն» բառերը փոխարինել «դրամարկղային մուտքի և (կամ) ելքի օրդերի համարը, կազմման ամսաթիվն ու գումարը սույն կարգով սահմանված ժամկետում» բառերով, իսկ «համարն» բառը փոխարինել «համարը, կազմման ամսաթիվն» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 3 ամիս հետո։ Սույն որոշման 34.1-ին, 34.2-րդ և 34.3-րդ կետերի վերաբերյալ կարգավորումները տարածվում են 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ